ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«29» ապրիլ 2026թ.
№ ԱՊԵՆԱ/1364

«ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 00842776/
ՀՀ, ք. Երևան, Շոպրոնի 21
Էլ. փոստի հասցե՝ info@ltp.am
Հեռ.՝ 374 10 660-551
374 10 660-552

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ-ի միջև 24.10.2017թ. կնքված N ՄԱԱՇՁԲ-13-37 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) (համաձայնագիր թիվ 1 առ 16.03.2018թ. և փոփոխություն թիվ 1 առ 26.12.2018թ.) շրջանակներում «ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ-ն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված աշխատանքները չի կատարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5 կետի «բ» ենթակետը՝ (կատարողը բազմիցս խախտել է սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի կատարման ժամկետները) ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.04.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի **900005028106** հաշվեհամարին փոխանցել **9 468 408 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և **700 000 ՀՀ դրամ**՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.5 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 06.12.2024թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում ՀՀ պետական բյուջեի **900005570115** հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել **9 321 000 ՀՀ դրամ**՝ ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության նկատմամբ վերոնշյալ պայմանագրի շրջանակներում առկա պարտավորությունը (հաշվապահական հաշվառման մեջ ձևակերպված դեբիտորական պարտքը), որից 7 621 000 ՀՀ դրամը հանդիսանում է կանխավճարի մնացորդ, իսկ 1 700 000 ՀՀ դրամը աշխատանքների ուշացման հետևանքով հաշվարկված տույժ և **128 979 000 ՀՀ դրամ**՝ (Պայմանագրի առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը): Նշված գումարների վճարված լինելը հավաստող փաստաթղթերի

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

բնօրինակները անհրաժեշտ է մինչև 2026թ. մայիսի 7-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Հայտնում եմ, որ վերոնշյալ գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Տեղեկացնում եմ նաև, որ վերոգրյալի համաձայն «ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ-ն կընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ